600.0024.13.02.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

13 փետրվարի 2019 թվականի №24Ա

ք.Երևան

«ԱՐՄՓԱՈՒԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՇՈԳԵԳԱԶԱՅԻՆ ՑԻԿԼՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 23-րդ և 35-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, հաշվի առնելով «ԱՐՄՓԱՈՒԵՐ» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի հունվարի 11-ի հայտը, հունվարի 24-ի №03/19 գրությունը և Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության 2019 թվականի փետրվարի 5-ի №01ԳԲ/13.2ՀՈվԲ/584-19 և №01ԳԲ/13.2ՀՈվԲ/589-19 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «ԱՐՄՓԱՈՒԵՐ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրել համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էլեկտրակայանում (Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի վարչական տարածք) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2046 թվականի հոկտեմբերի 14-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2021 թվականի հոկտեմբերի 14-ը:
2. Հաստատել «ԱՐՄՓԱՈՒԵՐ» փակ բաժնետիրական ընկերության համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի փետրվարի 14-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք.Երևան

13 փետրվարի 2019թ.